

**Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Մարգսյանը մասնակցեց<<ՍՕՍ>> մանկական
գյուղում կազմակերպված տոնական միջոցառմանը**

<<ՍՕՍ>> մանկական գյուղի ամանորյա միջոցառմանը խոսք ասաց Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Մարգսյանը, ով Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանի անունից երեխաներին ու աշխատակազմին շնորհավորեց գալիք Նոր տարվա ու Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ: Մաղթեց, որ այն լինի հաջողության, ձեռքբերումների ու նպատակների իրականացման տարի: Տոնաձատ, Ձմեռ պապ ու Ձյունանուշ, երգ, պար, ուրախ տրամադրություն. Այսպիսին էր մթնոլորտը <<ՍՕՍ>> մանկական գյուղում միջոցառման պահին: Ցուցադրվեց նաև ֆիլմ, որը պատմում էր, թե ինչպես են <<ՍՕՍ>>-ի ընտանիքների երեխաներն իրենց տներում պատրաստվում Ամանորին: